ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1,

№ 12-102876, 102878/1 « 26 » 08 2021թ.

«ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՋԻԼԱՎՅԱՆՆԵՐ ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՋԻԼԱՎՅԱՆՆԵՐ» ՍՊ ընկերության միջև 28.06.2021 թվականին կնքվել է «ԵՔ- ԲՄԱՊՁԲ-21/16-3» ծածկագրով գնման պայմանագիր:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Երևանի քաղաքապետարան 21.08.2021 թվականին մուտքագրված Ձեր համապատասխան գրությամբ տեղեկացրել եք, որ ընկերությունը չնախատեսված խոչընդոտների պատճառով հրաժարվում է մատակարարել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/16-3» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված ապրանքները և խնդրել եք լուծել պայմանագիրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հիմք ընդունելով «ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՋԻԼԱՎՅԱՆՆԵՐ» ՍՊ ընկերության դիմումը վերոնշյալ պայմանագիրը լուծելու վերաբերյալ, Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համարելով այն լուծված, պատշաճ ծանուցումն ապահովելու

նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը՝ հավելված 4.2 և հավելված 5.1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն «Ամերիա բանկ» ՓԲԸ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարները Երևանի քաղաքապետարանի համապատասխան հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Ընկերությանը, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, Ընկերության տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազորված պետական մարմին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կատ.Ն.Սարգսյան
Ա.Գաբրիելյան
հեռ.011 514249